



*Շրջակա միջավայրի նախարարության
«Հիդրոոդերոլոգիայի և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ*

ԱԳՐՈՏԵՐՆԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

2024


Հոկտեմբերի երրորդ տասնօրյակ

Տեղեկագիրը կազմել է ագրոոդերոլոգիայի բաժինը՝ մասնագիտացված ագրոոդերոլոգիայի կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:

Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Սուրենյան

ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հոկտեմբերի երրորդ փասնօրյակում օդի միջին ջերմաստիճանը հանրապետության շրջանների զգալի մասում ցածր եղել է նորմայից 3-4, րեղ-րեղ՝ 5 աստիճանով:



Տասնօրյակի ամենաբարձր ջերմաստիճանները դիպել են հոկտեմբերի 24-ին, 25-ին, 29-31-ն ընկած ժամանակահատվածում. Տավուշում գրանցվել է +16...+20°C, Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +12...+14°C, նախալեռնային շրջաններում՝ +16...+18°C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +20...+22°C, նախալեռնային շրջաններում՝ +14...+16°C, Շիրակում՝ +11...+15°C, Կոտայքի լեռնային շրջաններում՝ +11...+14°C, նախալեռնային շրջաններում՝ +14...+16°C, Գեղարքունիքում՝ +10...+14°C, Լոռիում՝ +13...+18°C, Արմավիրում, Արարատում՝ +18...+20°C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ +10...+12°C, նախալեռներում՝ +12...+14°C (Աշտարակ՝ 18°C):

Տասնօրյակի ամենացածր ջերմաստիճանները դիպել են հոկտեմբերի 28-ին. Տավուշում գրանցվել է 0...+2°C (Դիլիջան՝ -4°C), Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ -5...-7°C, նախալեռնային շրջաններում՝ 0...+2°C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +1...+3°C, նախալեռնային շրջաններում՝ -1...-2°C (Սիսիան՝ -7°C), Շիրակում՝ -4...-7°C (Աշոցք՝ -10°C), Կոտայքի լեռնային շրջաններում՝ -4...-8°C, նախալեռնային շրջաններում՝ 0...+2°C, Գեղարքունիքում՝ -2...-7°C (Գավառ՝ -8°C), Լոռիում՝ -3...-6°C (Տաշիր՝ -9°C), Արմավիրում, Արարատում՝ 0...-4°C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ -6...-8°C, նախալեռներում՝ -1...+1°C:









Տասնօրյակային տեղումների գումարային քանակը Շիրակում կազմել է 0.4-1մմ (2-7%), Լոռիում՝ 1-2մմ (5-18%), Տավուշում՝ 1-2մմ (6-14%), Արագածոտնի լեռնային շրջաններում՝ (Ծաղկահովիտ՝ 1մմ-7%), նախալեռներում՝ (Աշտարակ՝ 0.2մմ-1%), Գեղարքունիքում՝ 2-6մմ (8-43%), Կոտայքի լեռնային շրջաններում՝ 0.2-1մմ (1-4%), նախալեռնային շրջաններում, Արմավիրում, Արարատում տեղումներ չեն դիտվել, Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ 2մմ (7%), նախալեռնային շրջաններում՝ 1մմ (9%), Սյունիքի հովտային շրջաններում՝ 1-17մմ (11-96%), նախալեռնային շրջաններում՝ 6-30մմ (46-127%)



Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանները լեռնային շրջաններում գրանցվել է $-6...-8^{\circ}\text{C}$ (Գավառում՝ -12°C), Արարատյան դաշտում, Տավուշի և Սյունիքի հովտային շրջաններում՝ $-4...-7^{\circ}\text{C}$:

Վեգետացիոն ինդեքսի ընթացիկ ընթացքն անցյալ տարվա և բազմամյա միջինի համեմատ



Գյուղատնտեսական մշակաբույսերի աճն ու զարգացումը

Տասնօրյակի ընթացքում ամենուրեք աշնանացան ցորենի վեգետացիան շարունակվել է:

Հոկտային շրջաններում բազմամյա արժեքներին մոտ կատարվել է խաղողի վազի այգեթաղ, շարունակվել է ծառերի տերևների գունաթափումը:

Առանձին լեռնային շրջաններում աշնանացան ցորենը թփակալել է, նախալեռներում առաջացել է երրորդ տերևը, հոկտային շրջաններում այն ծլել է:

Եղանակային պայմաններն այնքան էլ նպաստավոր չեն եղել աշնանացանի աճի և զարգացման համար: Հոկտեմբերի 22-24-ին Արմավիրում գրանցվել է առաջին ցրտահարությունը՝ օդում մինչև -1...-2 աստիճան: Նույն ժամանակահատվածում լեռնային շրջաններում հողի մակերևույթին գրանցվել է -5...-8, առանձին վայրերում մինչև -10...-12 աստիճան ցուրտ, ինչը կարող է վտանգավոր լինել թերզարգացած աշնանացանի համար:

